ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

«ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

(Հայտերի գնահատման արդյունքների հաստատման)

ք. Երևան 21.12.2018թ.

Ժամը՝ 17.00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Սարգսյան
Անդամներ՝ Հ. Ամիրյան
Ս. Դեմիրճյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Գագինյան

«Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման նիստը տեղի ունեցավ 21.12.2018թ., ժամը 17:00-ին, ք. Երևան, Աբովյան 9 հասցեում (ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության վարչական շենք, 1-ին հարկ թիվ 6 սենյակ):

«ՀԱԴՐՈՒԹ-1» ՍՊԸ, «ՖՈՏՈՆ» ՍՊԸ, «ԼԵԲՐՈՆ» ՍՊԸ և «ԳԱՐԴՄԵՆ» ՍՊԸ (կոնսորցիումով), «Դեագա» ՍՊԸ, «Սիս Ալպ» ՍՊԸ, «Գալիմա» ՍՊԸ, «Ստանդարտ-2014» ՍՊԸ և «ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ (կոնսորցիումով), «ԷԼԻՏ ՖՈՒԴ» ՍՊԸ վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՏՏ աշխատակցի կողմից տրվել է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների մասին եզրակացություն, ինչպես նաև «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնանշման հարցման հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար բավարար տեղեկատվություն:

Սահմանված ժամկետում առաջին տեղն զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացվել են մասնակցի որակավորման պահանջները հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագրերը):

13.12.2018թ. հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրվել է առաջին տեղն զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված տվյալ մասնակցի որակավորման պահանջները հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագրերը), գնահատման թերթիկների երկուական օրինակ և ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված տեղեկատվությունը:

«ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ի, «Սիս-Ալպ» ՍՊԸ-ի, «ԼԵԲՐՈՆ» ՍՊԸ և «ԳԱՐԴՄԵՆ» ՍՊԸ (կոնսորցիումով), հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերի անհամապատասխանություններ է արձանագրվել: Սահմանված ժամկետում շտկվել են

անհամապատասխանությունները, բացառությամբ «Սիս-Ալպ» ՍՊԸ-ի: Այդ հիմքով «Սիս-Ալպ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար:

«ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ի, «Սիս-Ալպ» ՍՊԸ-ի, «ԷԼԻՏ-ՖՈՒԴ» ՍՊԸ-ի, «Ստանդարտ-2014» ՍՊԸ և «ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ (կոնսորցիումով), «Դեագա» ՍՊԸ, «ԼԵԲՐՈՆ» ՍՊԸ և «ԳԱՐԴՄԵՆ» ՍՊԸ (կոնսորցիումով), «Գալիմա» ՍՊԸ ներկայացրած փաստաթղթերում՝ հրավերով և ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի (ապրանքների ամբողջական նկարագրի) անհամապատասխանություններ է արձանագրվել:

Սահմանված ժամկետում «ՖՈՏՈՆ» ՍՊԸ, «ԷԼԻՏ-ՖՈՒԴ» ՍՊԸ, «Դեագա» ՍՊԸ, «ԼԵԲՐՈՆ» ՍՊԸ և «ԳԱՐԴՄԵՆ» ՍՊԸ (կոնսորցիումով), «Գալիմա» ՍՊԸ շտկել են անհամապատասխանությունները: «Ստանդարտ-2014» ՍՊԸ և «ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ (կոնսորցիումով) և «Սիս-Ալպ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չեն շտկել ապրանքների ամբողջական նկարագրի անհամապատասխանությունները: Այդ հիմքով «Ստանդարտ-2014» ՍՊԸ և «ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ (կոնսորցիումով) և «Սիս-Ալպ» ՍՊԸ-ն հայտերը գնահատվել են անբավարար:

Թիվ 9 և 14 չափաբաժիններով հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերի, ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի (ապրանքների ամբողջական նկարագրի) ներկայացման պահանջ է ներկայացվել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ «ԼԵԲՐՈՆ» ՍՊԸ-ին և «ԳԱՐԴՄԵՆ» ՍՊԸ-ին (կոնսորցիումով): Սահմանված ժամկետում ներկայացվել են պահանջվող փաստաթղթերը և ապրանքների լիարժեք նկարագիրը:

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետի դրույթները, «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնանշման հարցման հրավերի 1-ին մասի 7.19, 7.20 կետերը, գնահատման թերթիկները՝ Հանձնաժողովը 3 կողմ, 0 դեմ ձայնով, ***միաձայն որոշեց***՝

Ա. Ընտրված մասնակից ճանաչել՝

- «ՀԱԴՐՈՒԹ-1» ՍՊԸ-ին N 1 չափաբաժնով.
- «ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ին N 17 չափաբաժնով.
- «ԼԵԲՐՈՆ» ՍՊԸ-ին և «ԳԱՐԴՄԵՆ» ՍՊԸ-ին կոնսորցիումով NN 2, 3, 4, 8, 9, 10, 14, 15, 16 չափաբաժիններով
- «Դեագա» ՍՊԸ-ին NN 5,13 չափաբաժիններով
- «Գալիմա» ՍՊԸ-ին N 11, 12 չափաբաժիններով
- «ԷԼԻՏ ՖՈՒԴ» ՍՊԸ-ին N 6, 7 չափաբաժիններով:

Բ. Հաստատել «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի **պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության** տեքստը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն հրապարակել:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Սամվել Սարգսյան

Անդամներ՝ _____ Համլետ Ամիրյան

_____ Սուսաննա Դեմիրճյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Սահակ Գագինյան